

Ա. Հ. ԴԱՐՐԻՆԵԼՅԱՆ

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 1986 թ.
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐՆ ՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Հաշվետու զեկուցում ՀՍՍՀ ԳԱ Ռիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքի երկրաբանական սեկցիայի ընդհանուր ժողովում՝ 28.04.87 թ.)

Մեր երկրի ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում սոցիալ-տնտեսական դարգացման, արագացման, վերակառուցման ու վերափոխման, դեմոկրատացման, հրապարակայնացման վիթխարի փոփոխություններ են տեղի ունենում: Այդ վերափոխման պրոցեսներում իր ուրույն և հույժ կարևոր դերն ունի գիտությունը:

Կուսակցության հունվարյան և հետագա պլենումների և կառավարական մարմինների որոշումների լույսի տակ նոր խնդիրներ են առաջ քաշվում գիտության առջև, որոնց լուծման համար յուրովի մոտեցում է պահանջվում գիտական պրոբլեմների, ինստիտուտների կառուցվածքի, կադրերի նկատմամբ այն հաշվով, որպեսզի գիտական հետազոտություններն ավելի նպատակասլաց բնույթ կրեն և ուղղված լինեն առավել կարևոր, արդիական, հեռանկարային բնույթի խնդիրների լուծմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում սեկցիայի և բաժանմունքի նիստերում քննարկվել են բազմաթիվ (մոտ 60) գիտական և գիտակազմակերպական հարցեր, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվել կառավարական հանձնարարություններին և նրանց որոշումներից բխող խնդիրներին:

Քննարկվել են 1986 և 1987 թվականների, 1986—2005 և մինչև 2010 թվականների կոնկրետ ու հեռանկարային պլանները, ներդրման պլանները, ինստիտուտների նոր կառուցվածքները և ՍՄԿԿ 27-րդ և ՀԿԿ 28-րդ համագումարների որոշումներից բխող խնդիրների կատարման միջոցառումները: Ինստիտուտների կողմից կատարվել է գիտաշխատողների և ինժեներատեխնիկական անձնակազմի որակավորում և նրանք անցել են վճարման նոր համակարգին:

Կանգ առնենք քննարկված հարցերից մի քանիսի՝ առավել կարևորների վրա:

Մեր հանրապետության համար ամենակարևոր և այժմեական պրոբլեմներից մեկը, որի մշակմանը մասնակցում են համարյա բոլոր գիտական հաստատություններն ու շատ արտասփրական հիմնարկներ, դա «0.74.03» Երկրաշարժերի կանխագուշակման և սեյսմակայուն շինարարության նոր մեթոդների մշակման պրոբլեմն է: Կազմված է այդ գծով տարվող հետադասությունների բավական մանրամասն կոորդինացիոն պլան, որը բոլոր շահագրգռված հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել և հաստատվել է սեկցիայի ընդլայնված նիստում: Այդ կապակցությամբ ցանկանում եմ նշել հետևյալը: Մի քանի տարվա ընդմիջումից հետո Գառնիի երկրաֆիզիկական դիտակայանը ԴԱ նախագահության որոշմամբ կրկին վերադարձվեց Երկրաֆիզիկայի և ինժեներային երկրաշարժաբանության փորձնամեթոդական սեյսմականխագուշակման արշավախմբին: Հարկ է շեշտել, որ Գառնիի դիտակայանը եղակի կառույց է, որտեղ ստեղծված են բոլոր հնարավորությունները՝ սարքավորումներ, լաբորատորիաներ, աշխատասենյակներ և այլ հարմարություններ, բեղմնավոր աշխատանքի համար: Այն կարող է դառնալ մեր երկրում նման հետազոտությունների կենտրոններից

մեկը: Հարկավոր է միայն, որ մեր դիտական հաստատությունները հետա-
քրքրություն հանդես բերեն և օգտագործեն այդ հնարավորությունները:

ՀՍՍՀ Պետպլանի հանձնարարությամբ ընդհանրացված են այդ ուղղու-
թյամբ հանրապետությունում 1979—1985 թթ. ժամանակաշրջանում կա-
տարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները և 1986—
1990 թթ. համար հետազոտությունների նոր պլան է կազմված:

Մինիստրների խորհրդի հանձնարարությամբ կազմված է նաև 1986—
1990 թթ. հանրապետության ընդերքում ստորերկրյա ջերմային ռեսուրսների
հայտնաբերման ու դրանց օգտագործման ուղղությամբ տարվող հետազո-
տությունների պլան:

Կոորդինացիոն խորհրդի հետ համատեղ հաստատվել է երկրաբանական
և երկրաֆիզիկական գիտությունների գծով մի քանի հանրապետական պրո-
լեմների համատեղ աշխատանքների կոորդինացիոն պլան:

Բաժանմունքի բյուրոյի ընդլայնված նիստում քննարկվել է Ղափանի
մետալուրգիական լաբորատորիայի գործունեությունը: Պարզվում է, որ լաբո-
րատորիայում լուրջ հետազոտություններ են կատարվում հանքաքարից օգ-
տակար բաղադրիչների կորզման առավել ուսցիոնալ մեթոդների մշակման,
դրանց անթափոն, համալիր օգտագործման ուղղությամբ: Զնայած այդ լա-
բորատորիայի առաջարկները քննարկվել և հավանության են արժանացել
մեր երկրի հեղինակավոր գիտական կազմակերպությունների կողմից (ՍՍՀՄ
ԳԱ Բաշկովի անվան Մետալուրգիայի գիտահետազոտական ինստիտուտ և
այլն), ցավոք սրտի, նրանց մտահղացումները դեռ գործնական կիրառու-
թյուն չեն գտել: Այդ հարցը շուտով քննարկվելու է մեր ակադեմիայի Նա-
խագահությունում և պետք է հուսալ, որ այն դրական լուծում կստանա:

Մեր սեկցիայի ընդլայնված նիստում և ապա ԳԱ Նախագահությունում
քննարկվեց Վերգետնյա-տիեզերական երկրաֆիզիկական սեյսմական խա-
զուշակման համակարգերի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի գործու-
նեությունը: Պարզվեց, որ այդ հիմնարկի աշխատանքներում տեղ են գտել
դիտական, գիտակազմակերպչական, ֆինանսական լուրջ թերություններ: Նա-
խագահության որոշմամբ ճշտվել է կոնստրուկտորական բյուրոյի գիտական
պրոֆիլը, իսկ երկրաշարժերի կանխազուշակման գծով հետազոտություններ
կատարող երկրաֆիզիկոսների խումբը՝ համապատասխան լաբորատոր սար-
քավորումներով հանդերձ, ինչպես նաև Գառնիի դիտակայանը, հանձնվել են
Երկրաֆիզիկայի և ինժեներային երկրաշարժաբանության ինստիտուտի փորձ-
նամեթոդական սեյսմական խազուշակման արշավախմբին:

Մի քանի խոսք մեր ամսագրի գործունեության մասին: Հայտնի է, որ
ամսագրերն ու մենագրությունները միակ աղբյուրն են, որոնց միջոցով գի-
տական հասարակայնությունը հանրապետությունում, առավել ևս նրա սահ-
մաններից դուրս, գաղափար են կազմում մեզ մոտ տարվող հետազոտու-
թյունների արդյունքների մասին:

Այստեղից բխում է այդ հրատարակությունների պատասխանատվու-
թյունը գիտական նվաճումները ճիշտ, անկանխակալ ու լիարժեք արտացո-
լելու գործում: Մեր ակադեմիայի բաժանմունքներին կից ստեղծված են հա-
տուկ սեկցիաներ, որոնք պետք է վերահսկեն այդ հրատարակությունները:
«ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, գիտություններ Երկրի մասին» ամսագրի գործու-
նեությունում որոշակի դրական տեղաշարժեր են նկատվում: Նրա ծավալի
առավել ուսցիոնալ օգտագործման հետևանքով հնարավոր է դարձել տարե-
կան մոտ 10 հոգված ավելի տպագրել. բոլոր հոգվածներն առանց բացառու-
թյան գրախոսվում են. սովորություն է դարձել հրատարակված մենագրու-
թյունների գրախոսումը, ընդ որում, գրախոսմանը մասնակցում են ինչպես
մեր հանրապետության մասնագետներն, այնպես էլ այլ քաղաքների գիտնա-

կանները: Լեմազրում պետք է ունենալ «Քննադատություն և վիճաբանություն» բաժին, որտեղ կգրախոսվեն ոչ միայն մենագրական աշխատությունները, այլև առանձին հոդվածները: Մեր կարծիքով, սա այն բնագավառներից մեկն է, որտեղ պետք է կիրառվի մտքերի, տարբեր կարծիքների ազատությունը:

Ակադեմիայի նախագահության որոշմամբ պետք է ստուգվեն բոլոր պարբերականների գործունեությունը: Հատուկ հանձնաժողովը ստուգեց մեր ամսագրի վերջին տարիների գործունեությունը, ստուգման արդյունքները բնորոշեցին սեկյիայի նիստում: Պարզվեց, որ դրական տեղաշարժերի կողքին կան և թերություններ, միջոցառումներ առջարկվեցին ամսագրի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

ԳԱ նախագահության և ՀՍՍՀ Պետշինի որոշմամբ ՀՍՍՀ Ճարտարապետության և շինարարության գիտահետզոտական ինստիտուտի գիտամեթոդական ղեկավարությունը դրվել է մեր ակադեմիայի վրա (այսինքն, այդ ինստիտուտն այժմ կրկնակի ենթակայության կարգավիճակ ունի), որը հնարավորություն է ընձեռնում էլ ավելի սերտ զուգակցելու ինժեներային երկրաշարժաբանության ու սեյսմակայուն շինարարության մեթոդների մշակման գծով տարվող հետազոտությունները:

Հարկ է նշել, որ զգալի դժվարություններ հաղթահարելուց հետո, Երևանի պետական համալսարանում ստեղծվեց երկրաբանական գիտությունների գծով դիսերտացիաների պաշտպանության մասնագիտացված խորհուրդ. այժմ մեր երիտասարդ գիտնականները երեք մասնագիտությունների գծով՝ «ընդհանուր և ռեգիոնալ երկրաբանություն», «օգտակար հանածոների որոնում և հետախուզություն» և «օգտակար հանածոների հանքավայրերի որոնման երկրաֆիզիկական մեթոդներ», կարող են թեկնածուական դիսերտացիաներ պաշտպանել: Իրագործելի հնարավորություններ կան նաև դոկտորական դիսերտացիաներ պաշտպանելու իրավունք ստանալու համար: Սակայն, ցավոք սրտի, մեր երիտասարդները և գիտական հաստատությունները հարկ եղած ջանասիրություն չեն հանդես բերում այս հարցում: Շուտով մեկ տարի կլրանա այդ խորհրդի հաստատման օրից, այնինչ ընդամենը մեկ մարդ է դիսերտացիա պաշտպանել: Եթե այդպես շարունակվի, ապա մենք կզրկվենք այդ իրավունքից:

Գիտական հետազոտությունների հիմնական արդյունքները

Հաշվետու տարում մեր գիտական ու գիտաարտադրական հաստատությունները զգալի նվաճումներ են ձեռք բերել Հայաստանի բնատարածքում երկրակեղևի ուսումնասիրման բնագավառում:

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում հետազոտություններ են կատարվել 10 պրոբլեմների (17 թեմա) գծով, որոնք ընդգրկում են հանրապետության ռեգիոնալ երկրաբանության և ֆիզիկական աշխարհագրության հիմնական ուղղությունները՝ շերտագրությունն ու տեկտոնիկան, մագմատիզմն ու օգտակար հանածոների տեղաբաշխման օրինաչափությունները, երկրաքիմիան, ինժեներային երկրաբանությունն ու ջրաերկրաբանությունը, ֆիզիկական աշխարհագրությունը:

Ինստիտուտը մասնակցում է համամիութենական երկու գիտատեխնիկական և միջազգային երեք գիտական ժրագրերի մշակմանը, համատեղ աշխատանքներ է կատարում հանրապետության և միութենական գիտական և արտադրական այլ կազմակերպությունների հետ:

Ղեկավար մարմինների հանձնարարությամբ մի շարք եզրակացություններ են տրվել տարբեր ժողովրդատնտեսական օբյեկտների ինժեներակրթական պայմանների վերաբերյալ:

Նշենք կատարված աշխատանքներից մի քանիսը: Շարունակվել են տե-
սական հետազոտությունները նրկրի ներքին կառուցվածքի և դինամիկայի
վերաբերյալ, մշակվել են երկրակեղևի տիպային երկրակառույցների և երկ-
րադինամիկ իրադրությունների համալիր մոդելներ:

Նոր տվյալներ են ստացվել օֆիոլիտային ֆորմացիաների վերաբերյալ:
Վեդու օֆիոլիտային գոտում հայտնաբերվել է մագնեզիումի բարձր պարու-
նակության պիկրոդոլերիտների և պիկրոքալսիտների գնդաձև լավաների
երկու հորիզոն, որոնց մեջ առանձնացված են բարձր մագնեզիումային ցածր
ալկալային և չափավոր մագնեզիումային ալկալային տարբերակներ: Ըստ
մի շարք պետրոքիմիական առանձնահատկությունների, դրանց հալման ջեր-
մաստիճանը համապատասխանում է վերին պատյանի հալոցքներին:

Կազմված է Տավրոս-Կովկասյան մարզի ակտիվ բեկվածքների և լինեա-
մենտների քարտեզի էսքիզը, առանձնացվել են առավել ակտիվ բեկվածք-
ները և նրանց հետ կապված երկրաշարժերի օջախները:

Տպագրության է պատրաստված Բուլղարիայի, Կովկասի, Առաջավոր
Ասիայի տեղեկատվական քարտեզը: Ավարտված է «Անդրկովկասի
վերին պերմի և ստորին տրիասի կոնոգոնտների կենսաշերտագրական նշա-
նակությունը» մենագրությունը, տրված է ՀՍՍՀ պերմ-տրիասյան նստվածք-
ների զոնալ ստորաբաժանումը և դրանց կտրվածքների համահարաբերակցու-
թյունը Թեոխիսի մյուս մարզերի կտրվածքների հետ: Հիմնավորված է պերմի
և տրիասի սահմանային նստվածքների կտրվածքի անընդհատությունը, որը
կարևոր նշանակություն ունի այդ երկրաբանական համակարգերի սահմանի
հարցի լուծման համար:

Պատրաստված է «Փոքր Կովկասի ուշ յուրայի—նեոկոմի նստվածքա-
գոյացումը» մենագրությունը, ավարտված է «ՀՍՍՀ պալեոգենի նստվածք-
ների լիթոգենեզը և ֆիշառաջացման առանձնահատկությունները» աշխա-
տությունը:

Ավարտված են Թեղուսի պղինձ-մոլիբդենային հանքավայրի միներալա-
բանա-երկրաքիմիական հետազոտությունները, որոշված է հանքանյութերի
միներալային կազմը, հազվագյուտ տարրերի տեղաբաշխման բնույթը:

Ամփոփված են Փոքր Կովկասի և Մեծ Կովկասի Բեշասիի զոնայի բյու-
րեղային հիմքի ելուստների ուլեֆիդիում-ստրոնցիումային իզոքրոնային հե-
տազոտությունների արդյունքները, հաստատված է հիմքի ապարների մետ-
ամորֆիզմի վարիսյան հասակը: Կազմված է հանրապետության բնասա-
րածքում առաջիկա տարիներին նավթի և գազի պծով որոնողական աշխա-
տանքների ծրագիրը:

Ավարտված է Զանգեզուրի հանքային մարզի ֆորմացիաներում աղնիվ
տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների հետազոտությունը, բա-
ղահայտված են հանքայնացման ֆիզիկաքիմիական ու կառուցվածքային պայ-
մանները:

Կատարված է Աղստև գետի ավազանի ինժեներաերկրաբանական քար-
տեղահանումը և շրջանացումը, համակողմանի ուսումնասիրման հիման վրա
համապատասխան միջոցառումներ են առաջակվել պայքարելու վտանգավոր
երկրաբանական երևույթների դեմ: Կազմվել են տարբեր մասշտաբի երկրա-
ձևաբանական, ինժեներաերկրաբանական և այլ քարտեզներ:

Երկարամյա դիտարկումների հիման վրա տրված է կլիմաառաջացնող
հիմնական գործոնների բնութագիրը, ավարտված է «ՀՍՍՀ բնատարածքի
լանդշաֆտային կազմակերպվածությունը» մենագրությունը, կազմվել է Հայ-
կական ՍՍՀ լանդշաֆտային հուշարձանների քարտեզ:

Շարունակվում են հետազոտությունները «ՀՍՍՀ աղգային ատլաս» և

«ՀՍՍՀ և բնական պայմանների ու բնական ռեսուրսների ատլաս» թեմաների
ուղղությամբ:

Ղափանի մետալուրգիական լաբորատորիայում շարունակվում են հետազոտությունները հանքանյութերից օգտակար բաղադրիչների կորզման, դրանց համալիր ու անթափոն օգտագործման ուղղությամբ:

Գիտական հետազոտությունների արդյունքներից վեցը ներդրվել են ժողովրդական տնտեսության մեջ՝ «Քաջարանի հանքային դաշտի երկրաբանական ուսումնասիրությունը», «Ղափան քաղաքի և շրջակայքի երկրաձևաբանական և երկրաբանական խոշոր մասշտաբի քարտեզներ», «Հանքանյութերի միներալային կազմը և հիմնական հանքառաջացնող տարրերի տեղաբաշխման բնույթը Արմանիսի հանքանյութերում» և այլն:

Ինստիտուտի գիտաշխատողները հաշվետու տարում հրատարակել են 8 մենագրություն, տպագրության են պատրաստել 5 մենագրություն և տարբեր դիտական ամսագրերում հրատարակել 100-ից ավելի հոդվածներ:

Շարունակվել է սերտ գիտական համագործակցությունը մեր հանրա-
պետության գիտական ու արտադրական հիմնարկների, հարեան հանրապե-
տությունների, միութենական գիտական հաստատությունների և մի շարք
արտասահմանյան երկրների հետ (Չեխոսլովակիա, ԳԴՀ, Հունգարիա և այլն):

Հաշվետու տարում կազմակերպվել են գիտական նստաշրջաններ՝ «Կով-
կասի երկրադինամիկան» սեմինար-դպրոցը, որի աշխատանքներին մաս-
նակցել են անդրկովկասյան հանրապետությունների և միութենական այլ
հանրապետությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Կովկասի ռեգիո-
նալ հանձնաժողովի և ԳԱ Անդրկովկասյան գիտական խորհրդի հերթական
աշխատանքային խորհրդակցությունը՝ նվիրված գազի ու նավթի պրոբլեմ-
ներին:

Երկրաֆիզիկայի և ինժեներային երկրաշարժաբանության ինստիտուտում հետազոտություններ են կատարվել 4 պրոբլեմների (24 թեմա) գծով: Հիմնական գիտական ուժերը կենտրոնացված են եղել ՍՍՀՄ ԳԱ և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի Գիտության ու տեխնիկայի պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող և ՀԿԿ Կենտկոմի ու Մինիստրների խորհրդի որոշումներով նախանշված կարևորագույն ու նպատակային գիտատեխնիկական ծրագրերի իրագործման ուղղությամբ:

Նշենք մի քանի կարևոր գիտական արդյունքներ:

Զգալի աշխատանքներ են տարվել 0.74.03 «Մշակել և ժողովրդական տնտեսության պրակտիկայում ներդնել երկրաշարժերի, ցունամիների և հրաբխային ժայթքումների վտանգավորության գնահատման մեթոդներ և վնասների նվազեցման միջոցառումների համալիր» պրոբլեմի գծով: Մշակված է գրավիչափական ռեժիմային հետազոտությունների մեթոդիկա՝ խորքային լեկվածքների ժամանակակից երկրադինամիկ ալտիվության գնահատման համար:

Բացահայտված է ծանրության ուժի անոմալ, ոչ մակընթացային փոփոխությունների օգտագործման հնարավորությունը երկրաշարժերի երկարաժամկետ կանխագուշակման համար: Ֆիզիկական մոդելացման օգնությամբ հաստատված է բեկվածքների խորության որոշման հնարավորությունը ուղիղ և անդրադարձվող ալիքների սպեկտրների հետազոտման հիման վրա: Հայկական լեռնաշխարհի մի քանի երկրաշարժերի համար հաշվված են ապիմոսալ հոդոգրաֆներ: Ախալքալակի 1986 թ. երկրաշարժի էպիկենտրոնական շրջանում կատարված համալիր հետզոտությունները ցույց են տվել, որ երկրաշարժից առաջ տեղի են ունեցել էլեկտրաթելուրական ու մագնիսական դաշտերի անոմալ փոփոխություններ:

Ավարտվել են Երևան ու Ղափան քաղաքների և Ոսկեհատ ավանի սեյսմիկ միկրոշրջանացման աշխատանքները:

Մշակված է սեյսմիկ ազդեցությունների օգնությամբ երկրաշարժերի մոդելացման մեթոդիկա:

Կավերի սողանքայնության ուսումնասիրման երկարատև փորձերի արդյունքների վերլուծության հիման վրա բացահայտված է գրունտի կառուցվածքի թռիչքաձև վերափոխման դերը դեֆորմացիոն պրոցեսների կարգավորման գործում:

Հետազոտված են սողանքների մեխանիզմի առանձնահատկություններն աղային տեկտոնիկայի պայմաններում:

Մշակվել են էլեկտրահետախուզության նոր եղանակներ, որոնք թույլ են տալիս բարձրացնելու թափառող հոսանքների մեթոդով էլեկտրահետախուզական հետազոտությունների արտադրողականությունն ու ճշգրտությունը:

Ավարտված են Սևանա լճի ավազանի և Շիրակի սարահարթի նստվածքային ապարների երկրամագնիսական դաշտի նուրբ կառուցվածքի համալիր հետազոտությունները:

ՀՍՍՀ հարավ-արևելյան մասի համար առաջարկվել է երկրակեղևի վերին մասի գրավիտացիոն մոդել, բացահայտված է ծանրության ուժի իզոստատիկ անոմալիաների և նորագույն տեկտոնական շարժումների միջև եղած կապը:

Երկրաֆիզիկական հետազոտություններով տրված է նորագույն հարթրևային շրջանների ջերմային պայմանների գնահատականը. ստացված տվյալները հաստատում են այդ շրջաններում ստորերկրյա ջերմային էներգիայի առկայության հեռանկարայնությունը:

Ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել են գիտական հետազոտությունների 4 արդյունք՝ Զարենցավան քաղաքի սեյսմիկ շրջանացման քարտեզը, Եղվարդի ջրամբարի սեյսմիկ միկրոշրջանացումը, Երևան-Գեղարդ խճուղու սողանքային ծանրության ուժի ոչ մակրնթացային վարիացիաների հետազոտման կրկնվող գրավիչափական դիտարկումների մեթոդիկան:

Զգալի են հաջողությունները նոր տեխնիկայի ներդրման բնագավառում: Մշակված են երկրաֆիզիկական նոր սարքեր կույր հանքամարմինների որոնման համար, որոնք հաջողությամբ փորձարկվել են հանքավայրերում և հանքանության են արժանացել արտադրության մեջ աշխատող մասնագետների կողմից:

Հաշվետու տարում ինստիտուտը կազմակերպել է «Պոսենցիալ դաշտերի մեկնաբանման տեսությունն ու պրակտիկան» համամիութենական դպրոց-սեմինարը, որին մասնակցել են ավելի քան 200 գիտաշխատողներ և լսվել են շուրջ 170 դեկուցումներ:

Տեղի ունեցավ նաև հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված Ինստիտուտի կազմավորման 25-ամյակին:

Ինստիտուտի գիտական աշխատակիցները գործունե մասնակցություն են ցուցաբերել հանրապետական, միութենական և արտասահմանյան գիտաժողովներին և այլ միջոցառումներին, շարունակվել է սերտ գիտական համագործակցությունը հանրապետության և համամիութենական բաղմաթիվ գիտական և արտադրական հիմնարկների հետ:

Հրատարակվել է հոդվածների մեկ ժողովածու՝ «Գեոմեխանիկայի պրոբլեմներ», հ. 10, 7 մենագրություն և շուրջ 150 գիտական հոդված:

Միջգերատեսչային գիտական և արտադրական հաստատություններում և բուհերում կատարված աշխատանքի մասին

Հայաստանի Երկրաբանության վարչությունում ամփոփվել են պղնձի և պղինձ-մոլիբդենային հանքավայրերին վերաբերվող նյութերը, ցույց է տրվել որոշ ապարների որպես լցուկ օգտագործելու հնարավորությունը բետոն և շինարարական այլ շաղախներ պատրաստելիս:

Նրևանի Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի հետ համատեղ մշակվել են Նոյեմբերյանի ցեոլիտների հանքավայրի ռացիոնալ օգտագործման նախադրյալները:

Ավարտվել են Ղափանի հանքադաշտի խորքային երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման փորձնաարտադրական աշխատանքները, տեկտոնական խախտումների կցվածքներում օղակաձև կառուցվածքների հայտնաբերման նպատակով:

Ավարտվում են Հյուսիսային Հայաստանի տիեզերակրաբանական և բեկվածքների քարտեզների կազմման աշխատանքները:

Շարունակվում են խորքային ջերմային էներգիայի երկրաֆիզիկական և ռեգիոնալ երկրաբանական հետազոտությունները:

Ավարտվել է Արարատյան արտեզյան ավազանի վերաբերյալ մենագրությունը և առաջարկներ են արվել ստորերկրյա ջրերի ռացիոնալ օգտագործման նպատակով: Հայտնաբերվել են զգալի թվով մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների երևարկումներ և որոշվել են որոշ հանքավայրերի արդյունաբերական պաշարները:

Գունավոր մետալուրգիայի գիտահետազոտական ու նախագծային ինստիտուտում հետազոտություններ են տարվել միութենական և հանրապետական ծրագրերի և կարևորագույն գիտատեխնիկական պրոբլեմների գծով, ներդրվել են 5 հայտնագործությունների արդյունքներ: Հաշվետու տարում ավարտված աշխատանքներից առավել կերակորներն են՝ Մարցիգետի ավազանի ոսկու հանքավայրի երկրաբանական-տեխնոլոգիական քարտեզահանումը, հանրապետության մեջ ոսկու հանույթի հումքի ապահովման ու ընդարձակման և ցածր պարունակության հանքանյութերից ոսկի կորզելու նպատակով նոր էլեկտրադեսորբիոն տեխնոլոգիայի մշակումը, կատարվել է հանրապետության մետալուրգիական ձեռնարկությունների գործունեության տեխնիկատնտեսական վերլուծություն և հանձնարարականներ են տրվել արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ապացուցված է, որ հնարավոր է համալիր վերամշակման ենթարկել Արարատի հարստացուցիչ ֆաբրիկայի թափոնները, կորզելով նրանցից ազնիվ մետաղները և օգտագործել սիլիկատային բաղադրամասերը:

Մեծ աշխատանք է տարվել հանրապետության միներալահումքային բաղայի ամրապնդման ուղղությամբ, համալիր միջոցներ են ձեռք առնվել հանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և հանքանյութերից օգտակար բաղադրամասերի կորզման բնագավառում: Այդ հետազոտությունների արդյունքները ներդրվել են արտադրության մեջ:

Զգալի գիտահետազոտական աշխատանքներ տարվել Ռեգիոնալ երկրաբանական-էկոնոմիկական հետազոտությունների կովկասյան լաբորատորիայում: Որոշված են երկրաբանական-հետախույզական աշխատանքներ կատարելիս միջավայրի պահպանման հիմնական սկզբունքները և դրանց կիրառման նորմատիվները: Նման աշխատանք առաջին անգամ է կատարվում և այն մտցված է համամիութենական պլաններում: Տրվել է Բոլնիսի (Վրաց. ՈՍՀ) ոսկու և Նոյեմբերյանի ցեոլիտների հանքավայրերի երկրաբանական-տնտեսական գնահատականը:

Հետաքրքիր աշխատանքներ են տարվել Զբաղմունքների և ջրասեփակային գիտահետազոտական ինստիտուտում: Համայնքի միջոցառումներ են մշակվել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման նպատակով. որոշված է նախալեռնային շրջանների ջրամբարներից ու ոռոգման համակարգերից ներծծվող, ինչպես նաև ստորերկրյա ջրերի քանակը, դրանց շարժման ուղղությունները և ազդեցությունը Արարատյան և Շիրակի գոգավորությունների ստորերկրյա ջրերի ուժի մի վրա:

Ի հայտ են բերվել հին գետահովիտներ և ընդլավային ջրբաժաններ ու ցույց են տրվել ստորերկրյա ջրերի Արարատյան ավազան մուտք գործելու ուղիները:

Սելավների դեմ պաշտպանական նոր միջոցառումներ են մշակվել, Արարատի ջրամբարի օրինակով կատարելագործվել է ինստիտուտի կողմից ջրամբարներում առհասող ջրերի քանակության որոշման մեթոդիկան:

ՀՍՍՀ ճարտարապետության ու շինարարության գիտահետազոտական ինստիտուտում հետաքրքիր աշխատանքներ են տարվում սեյսմակայուն շինարարության բնագավառում:

Շենքերի վրա սեյսմիկ ազդեցության գոյություն ունեցող տարածական հաշվարկների համեմատական անալիզ է կատարվել՝ հաշվարկման լավագույն եղանակ ստեղծելու նպատակով:

Ցույց է տրված, որ առանձին դեպքերում, կախված երկրաշարժերի սպեկտրալ կազմից, շենքի հիմնատակի և հիմքի միջև շփման պակասեցման հաշվին կարելի է հասնել սեյսմիկ ազդեցության նվազեցման: Միջոցներ են ձեռք առնվել Նրեան քաղաքի սեյսմիկ ցանցի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Բուհերի աշխատանքների մասին

Նրեանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի Արարատյան և միներալաբանության ամբիոնը հաշվետու տարում շարունակել է հետազոտությունները «Մագմատիզմի էվոլյուցիան և ներծին հանքայնացումը» պրոբլեմի շրջով, պրոֆ. Ս. Ի. Բալասանյանը կազմել է «Երկրաբանական» ուսումնական ձեռնարկը: Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի երկրաբանական դիտությունների ինստիտուտների հետ համատեղ կազմվել են ուշ էոցենի և վաղ օլիգոցենի լիթոֆադիալ և հնաշխարհայրական քարտեզներ, ինչպես նաև ՀՍՍՀ հյուսիս-արևմտյան մասի տեկտոնական ու նորագույն տեկտոնիկայի քարտեզների նախնական տարբերակները:

Ոգտակար հանածոների որոնման և հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների ամբիոնում առաջին անգամ ապացուցվել է երկրաբանական միջավայրի ֆիզիկական պարամետրերի կախվածությունը տվյալ ժամանակի համար երկրի մագնիսական դաշտի բնույթից: Այդ կապն արտացոլում է մագմատիկ ու նստվածքային ապարներում օբյեկտիվորեն գոյություն ունեցող մագնիսական շերտայնությունը: Անհամասեռության կանխատեսումը լայն հեռանկարներ է բաց անում ստորերկրյա ջրերի, նավթի և գազի արդյունահանման բնագավառում:

Ոգտակար հանածոների որոնման և հետախուզության ամբիոնը հետազոտություններ է կատարել Մարցիգետի հանքադաշտում՝ նպատակ ունենալով բացահայտել նրա խոր հորիզոնների հանքայնացման հեռանկարները:

Ֆիզիկական աշխարհագրության ամբիոնը հետազոտություններ է կատարել Կուր գետի ավազանում (ՀՍՍՀ սահմաններում) լանդշաֆտադիտության, բնության պահպանման ուղղությամբ: Ամբիոնը հրատարակել է երկու ուսումնական ձեռնարկ՝ «Անդրկովկասի ֆիզիկական աշխարհագրու-

թյուն» (Վրաստանի և Ադրբեջանի մասնագետների հետ համատեղ) և «Հյուսիսային Ամերիկա»:

Երկրաձևաբանության և երկրաձևաչափության ամբիոնը շարունակել է իր արժեքավոր հետազոտությունները ընդլայնել հին գետահովիտների լայտնաբերման ու ստորերկրյա ջրերի արդյունահանման բնագավառում:

Պրոբլեմային գիտական խորհուրդների գործունեության ու գիտական հետազոտությունների կոորդինացիայի մասին

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ մեր ակադեմիայի նախագահությանը կից ստեղծվել է Կոորդինացիոն խորհուրդ, որը պետք է ղեկավարի ու կոորդինացնի հանրապետության սահմաններում գործող բոլոր գիտահետազոտական հիմնարկներում և բուհերում տարվող գիտահետազոտական աշխատանքները՝ անկախ այդ հիմնարկների գերատեսչային պատկանելիությունից: Խորհրդի նախագահը մեր պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն է: Այդ խորհուրդն իր սեկցիաներն ունի բոլոր բաժանմունքներում, այդ թվում նաև մեր բաժանմունքում՝ քիմիական գիտությունների և նրկրի մասին գիտությունների սեկցիաներ:

Կառավարության կողմից հաստատված է այդ խորհրդի կանոնադրությունը, շուտով կստեղծվեն նաև սեկցիաների կանոնադրությունները: Խորհրդի կանոնադրության մեջ մի շատ կարևոր կետ կա այն մասին, որ գիտական հարցերի վերաբերյալ նրա որոշումները և առաջարկությունները պարտադիր են կոորդինացիոն խորհրդի ոլորտում գտնվող բոլոր հիմնարկների համար: Սա բարձրացնում է այդ խորհրդի, նրա սեկցիաների հեղինակությունը և մյուս կողմից՝ նրանց պարտավորեցնում է: Մեր սեկցիայի կողմից մի շարք կարևոր պրոբլեմների գծով կազմվել են կոորդինացիոն պլաններ, որոնք քննարկվել ու հաստատվել են, սակայն պետք է խոստովանել, որ մենք իսկական, լիարժեք կոորդինացիայից դեռ հեռու ենք, ասլագայում մեծ առելիքներ կան:

Մեր սեկցիայի կազմում գործում են 5 պրոբլեմային գիտական խորհուրդներ, որոնք սկզբնական շրջանում բավականին ակտիվ գործունեություն ծավալեցին, բայց վերջին տարիներս զգալիորեն թուլացրին իրենց աշխատանքը:

Շատ կայուն, ակտիվ է գործում սելավային երևույթների դեմ պայքարելու գիտական խորհուրդը (նախագահ՝ պրոֆ. Վ. Ն. Հովսեփյան), որի աշխատանքները որպես օրինակ կարող են ծառայել նման գիտական միավորների համար:

Այս խորհուրդը մի շարք հետաքրքիր առաջարկներ է արել կոնկրետ օբյեկտների համար հակասելավային պաշտպանական միջոցառումների վերաբերյալ (այդ առաջարկները հասել են մինչև կառավարական մարմիններ) և հետևել ու հսկել են դրանց իրագործմանը: Խորհուրդը կազմել է 1986—1990 թթ. աշխատանքների կոորդինացիոն պլան, սերտ համագործակցության մեջ է գտնվում բոլոր շահագրգռված գիտական և արտադրական հիմնարկների հետ:

Վատ չի աշխատում ինժեներային երկրաշարժաբանության և սեյսմակայուն շինարարության գիտական խորհուրդը, այն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում սեյսմակայուն շինարարության բնագավառում հանրապետությունում կատարվող միջոցառումներին:

Բավականին արդյունավետ է գործում ընդամենը երկու տարի առաջ կազմակերպված Միութենական գիտությունների ակադեմիայի Միջգերատեսչային քարաբանական կոմիտեի Հայկական բաժանմունքը՝ Մ. Ա. Սաթյանի

ղեկավարությամբ, որտեղ լուրջ աշխատանքներ են տարվել ֆաներուպոյի 1:200000 մասշտաբի (ՀՍՍՀ բնատարածքի) և 1:500000 մասշտաբի (Անդրկովկասի համար) քարաբանական քարտեզներ կազմելու ուղղությամբ:

Խիստ թուլացրել են իրենց գործունեությունը մյուս խորհուրդները՝ ինժեներային երկրաբանության, երկրաբանական քարտեզների, քարտեզագրության:

Ամենամոտ ժամանակներում սեկցիայում պետք է քննարկվեն այդ խորհուրդների գործունեությունն այն հաշվով, որ եթե կան ավելորդ խորհուրդներ՝ դրանք լիկվիդացվեն, անհրաժեշտության դեպքում ստեղծվեն նորերը (օրինակ, երկրաշարժերի կանխագուշակման գծով), ճշգրտվեն անելիքներն ու նրանց առջև դրված խնդիրները:

Միութենական դիտությունների ակադեմիայի որոշմամբ (որի հետ մենք լիովին համամիտ ենք) այդ խորհուրդները պետք է լինեն առանձին գիտական պրոբլեմների գծով տարվող հետազոտությունները կոորդինացնող ղեկավար մարմիններ, քանի որ նրանք են լիազորված ղեկավարելու և պլանավորելու այդ հետազոտությունները, և որ միայն նրանց կազմում է, որ ընդգրկվում են տվյալ պրոբլեմի գծով հանրապետության լավագույն մասնագետները:

Ակադեմիկոսների և քղբակից-անդամների գիտակազմակերպչական գործունեության մասին

Ակադ. Ա. Տ. Ասլանյան՝ գրել է «Արարատյան գոգավորության ջրաերկրաբանությունը» աշխատության «Երկրաբանական դարգացման պատմությունը» բաժինը, տպագրության է պատրաստել (Մ. Ա. Սաթյանի հետ մեկտեղ) օֆիուիտների վերաբերյալ մենագրություն, հրատարակել է մի քանի հոդված, ղեկուցումներ է կարդացել Կովկասի երկրադինամիկային և նավթագազաբերությանը նվիրված գիտամոլորակներին: Շարունակել է տեոսական հետազոտությունները Երկրի ներքին կառուցվածքին ու երկրադինամիկային վերաբերող հարցերի շուրջը:

Ակադ. Ա. Հ. Գաբրիելյան՝ Մոսկվայի ու Լենինգրադի գործընկերների հետ մեկտեղ կազմել է պալեոգենի հարկային ստորաբաժանման ուրվագիծը, որը սլետք է քննարկվի Միջադպային երկրաբանական կոնգրեսի գալիք նստաշրջանում, ղեկավարում է ՀՍՍՀ 1:200000 մասշտաբի տեկտոնական քարտեզի կազմման աշխատանքները, ղեկուցում է կարդացել Կովկասի երկրադինամիկային նվիրված սեմինար-պրոցում, հրատարակել է գիտական հոդվածներ:

Թղթ.-անդամ Գ. Ի. Յեր-Ստեփանյան՝ հաշվետու տարում շարունակել է հետազոտությունները գրունտների ռեոլոգիայի ու լանջերի խորքային սողքերի գծով, հրատարակության է ներկայացրել «Երկրամեխանիկա» հոդվածների ժողովածուի հերթական համարը:

Թղթ.-անդամ Ա. Բ. Բաղդասարյան՝ «ՀՍՍՀ կլիման ու կլիմայական ռեսուրսները» թեմայի գծով գրել է «Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական պայմանները» ակնարկը, կազմել է ՀՍՍՀ աղգային համալիր ատլասի մի քանի բաղադրիչ բարտեզներ, ղեկավարել է աշխարհագրական տիրմինների բացատրական բառարանի կազմման աշխատանքները, հրատարակել է «Նրեանի կլիման» մենագրությունն ու մի քանի հոդվածներ:

Թղթ.-անդամ Ի. Լ. Նեբսեսով՝ մեծ կազմակերպչական աշխատանքներ է տարել Գառնիի դիտակայանը ստորափորումներով ապահովելու ուղղությամբ, մասնակցել է ստորերկրյա պայթեցումների հայտնաբերմանը նվիրված սո-

վետա-սամերիկյան բանակցություններին, հրատարակել է երկրաշարժաւրա-նությանը նվիրւած մենագրություն:

Թղթ.-անդամ Ռ. Ա. Մովսեսյան՝ ղեկավարում է Երևանի պոլիտեխնի-կական ինստիտուտի բարձր ճշտության երկրաձևաշափական շափումների ավտոմատացման լաբորատորիան: Վերջին տարիներս լաբորատորիայի աշ-խատանքներն ուղղված են նաև երկրակեղևի դեֆորմացիաների ուսումնա-սիրմանը. այդ նպատակով Գառնիի դիտակայանում տեղադրվել են համա-պատասխան սարքավորումներ (դեֆորմոգրաֆներ և այլն), որոնք պետք է շափանմուշ հանդիսանան ՍՍՀՄ-ի մասշտաբով: Պատրաստված են և շուտով սերիական արտադրության կհանձնվեն ուղղաձիգ շարժումները շափող սար-քեր, որոնք արդեն փորձարկվել են և մոտ ժամանակներում կտեղադրվեն նաև Գառնիի դիտակայանում:

Թղթ.-անդամ Ս. Վ. Գրիգորյան՝ գրել է «Օգտակար հանածոների հան-յավայրերի որոնման երկրաքիմիական մեթոդներ» տեղեկատուի 8 գլուխներ, որը տպագրվում է Մոսկվայի «Դիտություն» հրատարակչությունում: Հրա-տարակության է հանձնել նաև («Դիտություն», Մոսկվա) «Փորձարկում օգ-տակար հանածոների հանքավայրերի որոնման, հետախուզության և շահա-գործման ընթացքում» մենագրությունը. տպագրության է հանձնել Կոլսրի (Հնդկաստան) ոսկու հանքավայրի առաջնային երկրաքիմիական եզրա-պսակներին նվիրւած հոդվածը: Գործուն մասնակցություն է ցուցաբերել ՀՍՍՀ «Միջավայրի պահպանման և բնական ռեսուրսների ռացիոնալ օգ-տագործման» համալիր ծրագրի կազմման աշխատանքներին:

Թերություններ, խնդիրներ

Ինչ խոսք, ինչպես մեր սեկցիայի, այնպես էլ ինստիտուտների աշխա-տանքներում կան և թերություններ՝ կադրերի պատրաստման ու նրանց ճիշտ տեղաբաշխման, գիտական հետազոտությունների կոորդինացման, լա-բորատորիաների ժամանակակից սարքավորումներով ապահովման և այլ բնագավառներում: Կանգ առնենք դրանցից մի քանիսի վրա:

Վերջին տարիներս ընդհանրապես որոշ անտարբերություն է նկատվում դեպի գիտությունը, ասպիրանտուրայի ընդունելության պլանները մեծ դժ-վարությամբ են կատարվում, այս տարի նպատակային ասպիրանտուրային հատկացված տեղերի համար դեռևս ոչ մի դիմում չկա: Արդեն նշվեց, որ երիտասարդության կողմից դեպի գիտությունը որոշ անտարբերություն է նկատվում, սակայն չի կարելի ասել, թե նրանց մեջ չկան այնպիսիները, ո-րոնք կցանկանային զբաղվել գիտական աշխատանքով: Բայց ինչպե՞ս գտնել դրանց: Կրկին դրսևորվում է գիտական հիմնարկների անբավարար կապը բու-հերի հետ:

Քանի՞ դիպլոմային աշխատանք է կատարվում Երկրաբանական գի-տությունների ինստիտուտում՝ կամ ոչ մեկը, կամ էլ հատուկենտ. մասնակ-ցում են արդյոք մեր լաբորատորիաների ու բաժինների վարիչները դիպլո-մային աշխատանքների պաշտպանությանը, որպեսզի իրենց համար կադրեր ընտրեն, իհարկե՝ ոչ, Վերադաս մարմինների վերջին որոշումներով նախա-տեսվում է էլ ավելի սերտ համագործակցություն ստեղծել բուհերի և ակա-դեմիական գիտական հիմնարկների միջև, որը հնարավորություն կստեղծի վերջիններիս լաբորատորիաներն ու գիտական աշխատողներին ներգրավել ուսման պրոցեսում: Շատ ուրախալի է, որ նախատեսվում է դասախոսների մանկավարժական ծանրաբեռնվածությունը թեթևացնել ի հաշիվ ուսանող-ների ինքնուրույն աշխատանքի ծավալման: Այս միջոցառումներն անշուշտ

կնպաստուն որակի բարձրացմանը, իսկ մեր շրջանավարտների որակը դեռ հեռու է բավարար լինելուց:

